

26.167 -

ԱՐԴԱՐԱՅԻ Ա. Ս. Խ. Հ. ՀՈՂԺՈՂԿՈՄ

Կոլտնտեսային ու , սոցիալիզմի
ուղին միակ ճիշտ ուղին է աշ-
խատավոր գյուղացիներին համար:
(Գյուղատնտեսական ար-
տելի որինակելի կանո-
նադրությունից).

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԵԼԻ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

..... գյուղի
..... գյուղխորհրդի
Ձեռնիկ

Ա. Ս. Խ. Հ. Արխաղիայի

Սուխում—1935

11 1 FEB 2013

26/67

334.6

12-14

05 JAN 2010

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԱՆԱԳՐԱԴԱՐԱՆ

Արխիվային գործի անվանումը
Գործի անվանումը
Գործի անվանումը
Գործի անվանումը
Գործի անվանումը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԱՆԱԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԱՆԱԳՐԱԴԱՐԱՆ

Գործի անվանումը

Գործի անվանումը

Գործի անվանումը

Գործի անվանումը

Գործի անվանումը

Հրճանի
Գյուղատնտեսական
Գյուղի
(արտելի անունը)

արտելի ներկա կանոնադրությունը, վոր մշակված է
գյուղատնտեսական արտելի որինակելի կանոնադրու-
թյան հիման վրա, ընդունված՝ հարվածային կոլտն-
տեսականների համաժողովենական յերկրորդ համագու-
մարի կողմից և հաստատված Խ.Ս. Հ.Ս-ի ժողովրդա-
կան կոմիսարների Խորհրդի ու Համ. Կ. (Բ) Կ. Կեն-
տրոնական կոմիտեյի կողմից 1935 թվի փետրվարի
17-ին, ընդունվում է արտելի անդամների ընդհանուր

ժողովում (որ, ամիս, տարի)

Գյուղատնտեսական արտելի ընդհանուր
ժողովի նախագահ՝ (ստորագրություն)

Ընդհանուր ժողովի քարտուղար՝ (ստորագրություն)

Արձանագրված է շրջգործկոմում №

(որ, ամիս, տարի)

Շրջգործկոմի նախագահ՝ (ստորագրություն)

Շրջգործկոմի քարտուղար՝ (ստորագրություն)

Կնիքի
տեղը



Գ յ ու ղ ա տ ն տ Ե ս ա կ տ ն ա ր տ Ե լ ի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(Արտելի անունը)

Ի. ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. _____ շրջանի _____

Գյուղի աշխատավոր գյուղացիները կամավոր միանում, կազմում են գյուղատնտեսական արտել, վորպեսզի արտադրութեան ընդհանուր միջոցներով և կազմակերպված ընդհանուր աշխատանքով կառուցեն կոլեկտիվ, այսինքն՝ հանրային տնտեսութիւն, ապահովեն լիակատար հաղթանակ կուլակի դեմ, բոլոր շահագործողների ու աշխատավորութեան թշնամիների դեմ, ապահովեն լիակատար հաղթանակ կարիքի ու խավարի դեմ, մանր անհատական տնտեսութեան հետամնացութեան դեմ, ստեղծեն աշխատանքի բարձր արտադրողականութիւն և աշխատելով ապահովեն կոլտնտեսականների լավագույն կյանքը:

Կոլտնտեսային ուղին, սոցիալիզմի ուղին, միակ ճիշտ ուղին և աշխատավոր գյուղացիների համար: Արտելի անդամները պարտավորվում են ամրացնել իրենց արտելը, աշխատել ազնվորեն, բաժանել կոլտնտեսային յեկամուտն ըստ աշխատանքի, պահպանել հանրային սեփականութիւնը, պահպանել կոլտնտեսային ունեցվածքը, պահպանել տրակտորներն ու մեքենաները, կա-

դմակերպել ձիու և բանվոր անասունի լավ խնամքը, կատարել իրենց բանվորագյուղացիական պետութեան առաջադրանքները և այդպիսով դարձնել իրենց կոլտնտեսութունը բոլորիկյան և բոլոր կոլտնտեսականներին՝ ունեւոր:

II ՀՈՂԻ ՄԱՍԻՆ

2. Վոչնչացվում են բոլոր միջնակները, վորոնք առաջ բաժանում եյին արտելի անդամների հողաբաժինները և բոլոր դաշտային հողաբաժինները վեր են ածվում միասնական հողային մասսիվի, վորը կոլեկտիվ կերպով ոգտագործում ե արտելը:

Արտելի զբաղեցրած հողը (ինչպես և ամեն մի հող ին Ս չ Մ — ում) համաժողովրդական պետական սեփականութիւնն ե:

Այդ հողը բանվորա— գյուղացիական պետութեան որենքներով ամրացվում ե արտելին՝ անժամկետ ոգտագործման համար, այսինքն ընդմիշտ՝ և յենթակա չե վոչ առ ու ծախի, վոչ ել արտելի կողմից վարձու տրվելու:

Խորհրդների շրջանային զործադիր կոմիտեն յուրաքանչյուր արտելի տալիս և պետական մի ալտ՝ հողն անժամկետ ոգտագործելու համար: Այդ ալտում վորոշվում են արտելի ոգտագործած հողի չափն ու ճիշտ սահմանները, ընդվորում այդ հողերի կրճատում չի թույլատրվում, այլ թույլատրվում ե միայն ավելացնել զբանք կամ պետական ֆոնդի ազատ հողերի հաշվին, կամ թե մենատնտեսների զբաղեցրած ավելորդ հողերի հաշվին այն պայմանով, վոր արտելի հողաշերտերի մեջ մի այլ հողաշերտ չմտնի:

ՄԱՆՈՒԹՅՈՒՆ.— Վորովհետե հնարավոր չե լինովին վերացնել բազմահողաշերտերը (чересполосица) Արխագիայի կոլտնտեսութիւնների հողոգտագործ—

ման մեջ շնորհիվ գյուղացիական տնտեսութիւնների խուտորային տիպի տեղաբնակութեան, — թույլ տալ կոլտնտեսութիւնների հողոգտագործման մեջ բազմա հողամասերի գոյութիւնը, յիթե այդ իսկապես բըղխում ե տեղաբնակութեան խուտորային յեղանակից:

Յուրաքանչյուր կոլտնտեսականի տնտեսութեան անձնական ոգտագործման համար հանրայնացված հողերից հատկացվում ե վորքը հողակտոր, վորպես տընամերձ հողամաս (բանջարանոց, պարտել):

Կոլտնտեսականի տնտեսութեան կողմից անձնապես ոգտագործած տնամերձ հողամասի չափը (չհաշված բնակելի շենքերի բռնած հողը), կարող ե լինել մի քառորդ հեկտարից մինչև կես հեկտար, իսկ առանձին շրջաններում նաեւ մինչև մեկ հեկտար, նայած մարզային ու շրջանային պայմաններին, վորոնք սահմանում են դանակից հանրապետութիւնների հաղժողկոմատները, ին Ս չ Մ Հողժողկոմատի ցուցմունքների հիման վրա:

Ի նկատի ունենալով այն, վոր Արխագիայում կոլտնտեսութիւնների մեծ մասը ոգտագործման համար ունի 1 հեկտար և ավելի տնամերձ հողամաս, վոր պայմանավորված ե տեղաբնակութեան խուտորային յեղանակով ու հաշվի առնելով, վոր այդ հողերի վրա մեծ մասամբ աճում են բազմամյա բույսերը (ցիտրուսավորներ, մրգատու ծառեր, կաղին, խաղող և այլն)— սահմանել Արխագիայի յուրաքանչյուր շրջանի համար, յուրաքանչյուր կոլտնտեսականի տնտեսութեան անհատական ոգտագործման տնամերձ հողամասի չափը ¹/₄ — ից մինչև 1 հեկտար:

(ցույց տալ հողամասի չափը)

Ծանոթութիւն.— Վերոհիշյալ կետում արված տնամերձ հողամասերի սահմանված չափերը չեն կարող բարձրանալ տնամերձ հողամասերի այս սահմանված չափերի մեջ են մտնում բանջարանոցներն ու բազմամյա բույսերը, վորոնք են՝ մրգատու այգիները, խաղողի այգիները, ցիտրուսավորները, յեղեղնուտի (камыш) հատկացրած հողամասերը, վոր շինանյութ են տալիս շենքերը ծածկելու համար, տնամերձ անտառիկը, անմշակ բակը (коиндари) չհաշվելով բնակարանային շենքերին հատկացրած հողամասերը:

3. Արտելի միասնական հողային մասսիվը վոր մի դեպքում չպետք է պակասի:

Արգելվում է արտելից դուրս յեկած անդամներին հող հատկացնել ի հաշվի արտելի հողային տարածութիւն: Արտելից դուրս յեկողները կարող են հող ստանալ միմիայն պետական հողային ֆոնդի ազատ հողերից:

Արտելի հողերը բաժանվում են դաշտերի՝ հաստատված ցանքաշրջանառութիւն համաձայն: Յանքաշրջանառութիւն դաշտերում դաշտավարական յուրաքանչյուր բրիգադին մշտական հողամաս է ամրացվում ցանքաշրջանառութիւն ամբողջ ժամանակաշրջանի համար:

Անասնապահական խոշոր ֆերմաներ ունեցող կոտտեսութիւններում անհրաժեշտութիւն դեպքում բաժանականաչափ հող լինելիս կարելի յե առանձացնել վորոշ հողամասեր, վորոնք ամրացվում են ֆերմային և ոգտագործվում են ֆերմայի անասունների համար կերբարույսեր ցանելու նպատակով:

III

ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

4. Հանրայնացվում են՝ բոլոր բանող անասունները քյուղատնտեսական ինվենտարը (զուլմանը, շարքացա-

նը, վոցիւր, կալիչը, հնձիչը), սերմացվի պաշարները, կերի միջոցները՝ հանրայնացված անասունները պահպանելու համար անհրաժեշտ քանակութիւնով, արտելային տնտեսութիւնը վարելու համար անհրաժեշտ տնտեսական շենքերը և գյուղացիական մթերքները վերամշակող բոլոր ձեռնարկութիւնները:

Ձեն հանրայնացվում և մնում են կոտտեսականի տնտեսութիւն անձնական ոգտագործման համար՝ բնակելի շենքերը, նրա անձնական անասուններն ու թռչունները և կոլտնտեսականի տնտեսութիւն անձնական ոգտագործման անասունների պահպանութիւն համար անհրաժեշտ տնտեսական շենքերը:

Գյուղատնտեսական ինվենտարը հանրայնացնելիս արտելի անդամներին մնում է անձնապէս ոգտագործելու համար գյուղատնտեսական այն մասը ինվենտարը, վորն անհրաժեշտ է տնամերձ հողամասում կատարվելիք աշխատանքի համար:

Արտելը կազմակերպում և խառն անասնապահական ապրանքային ֆերմա, կամ մեծ քանակութիւնով անասուններ լինելու դեպքում՝ մի քանի մասնագիտացված անասնապահական ապրանքային ֆերմաներ:

(ցույց տալ խառը, մասնագիտացրած և այլն).

5. Հացահատիկային, բամբակացան, ճակնդեղական, վուշացան, կանեփացան, կարտոֆիլացան—բանջարաբուծական, թեյաբուծական ու ծխախոտագործական շրջաններում յուրաքանչյուր կոտտեսականի տնտեսութիւնը կարող է անձնական ոգտագործման համար ունենալ մի կով, մինչև յերկու զլուխ յեղջյուրավոր անասունի մատղաշ, մի մայր խոզիւր ձագերով, կամ յե-

Թե կողմնակցութեան վարչութիւնն անհրաժեշտ գտնի՝
յերկու մայր խող իրենց ձագերով, 10 վոչխար ու այծ
միասին, անասնամանափակ քանակութեամբ թռչուն ու
ճագար և մինչև 20 փեթակ:

Զարգացած անասնապահութիւն ունեցող հողագործական շրջաններում՝ յուրաքանչյուր կողմնակցութեան տնտեսութիւն կարող է անձնական ոգտագործման համար ունենալ 2—3 կով և բացի դրանից մատղաշներ, 2—ից մինչև 3 մայր խող իրենց ձագերով, 20—25 վոչխար ու այծ միասին, անասնամանափակ քանակութեամբ թռչուն ու ճագար և մինչև 20 փեթակ: Այդ շրջաններէ թվին են պատկանում որինակ՝ Ղազարխանի քոչվորային շրջաններին վոչ սահմանակից հողագործական շրջանները, Բելոռուսիայի անտառային շրջանները, Ուկրաինայի՝ Չերնիգովի ու Կիևի մարզերի անտառային շրջանները, Արևմտյան Սիբիրի յերկրի Բարաբինի տափաստանի շրջանները և Մերձ—Ալթայի շրջանները, Ոմսկի մարզի շրջանների Իշմի ու Տոբոլսկի խմբերը, Բաշկիրիայի լեռնային մասը, Արևելյան Սիբիրի արևելյան մասը, Հեռավոր Արևելյան յերկրի հողագործական շրջանները, Հյուսիսային յերկրի շրջանների Վոլգայի և Յուրալի մարզերը:

Վոչ քոչվոր ու կիսաքոչվոր անասնապահութեան շրջաններում, վորտեղ հողագործութիւնը փոքր նշանակութիւն ունի, իսկ անասնապահութիւնը վճռական դեր է խաղում անտեսութեան մեջ, յուրաքանչյուր կողմնակցութեան տնտեսութիւն կարող է անձնական ոգտագործման համար ունենալ 4—ից 5 կով և բացի դրանից մատղաշներ, 30—ից մինչև 40 վոչխար ու այծ միասին, 2—3 մայր խող իրենց ձագերով, անասնամանափակ քանակութեամբ թռչուն, ճագար, մինչև 20 փեթակ, ինչպես և մի ձի, կամ կուժիս տվող մի գամբիկ, կամ յերկու եշ, կամ յերկու ջորի: Այդ շրջանների թվին են

պատկանում որինակ՝ Ղազարխանի քոչվոր շրջաններին սահմանակից Ղազարխանի անասնապահական շրջանները, Թուրքմենիայի, Տաշկիստանի, Ղարախաչակի և Կիւրգիզիայի անասնապահական շրջանները, Ուրտիսի, Սակասիան, Բուրիաթ—Մոնղոլիայի արևմտյան մասը, Կարմիրիների ինքնավար մարզը, Հյուսիսային Կովկասի—Դաղստանի ինքնավար Ս ի ձ—ի, Չեչենո—Ինգուշիայի, Կարաբախի—Բալխարիայի, Կարաչայի և Ոսեթիայի ինքնավար մարզերի լեռնային շրջանները, ինչպես և Ադրբեյջանի, Հայաստանի ու Վրաստանի լեռնային շրջանները:

Քոչվոր անասնապահութեան շրջաններում, վորտեղ հողագործութիւնը համարյա վոչ մի նշանակութիւն չունի, իսկ անասնապահութիւնը հանդիսանում է տնտեսութեան համապարփակ ձևը, յուրաքանչյուր կողմնակցութեան տնտեսութիւն կարող է անձնական ոգտագործման համար ունենալ 8—10 կով և բացի դրանից մատղաշներ, 100—150 վոչխար և այծ միասին, մինչև 10 ձի, 5—8 ուղա: Այդ շրջանների թվին են պատկանում, որինակ՝ Ղազարխանի քոչվորական շրջանները, Նաղայայի շրջանը, Բուրիաթ—Մոնղոլիայի քոչվորական շրջանները:

Դրան համապատասխան՝

ա) Արևադիայի շրջանների ցածր մասերի գլուղերը համապարհեցնել հացահատիկային, բամբակացան, ճակնդեղացան, կարտոֆիլացան—բան ջարարութեական, թեյաբուսական ու ծխախոտագործական, նմանապես այլեգործական ու խաղողագործական շրջաններին, վորտեղ յուրաքանչյուր կողմնակցութեան տնտեսութիւն կարող է ունենալ անձնական ոգտագործման համար մի կով կամ մի գոմեշ (քած), մինչև յերկու գլուղ յեղջուրավոր անասունի մատղաշ, մի մայր խող իր ձագերով, կամ յեթե կողմնակցութեան վարչութիւնն անհրաժեշտ գտնի՝

յերկու մայր խող իրենց ձագերով, մինչև 10 վոչխար ու այծ միասին, անսահմանափակ քանակությամբ թռչուն և մինչև 20 փեթակ։ Արխազիայի շրջանների լեռնային մասերի գյուղերը հավասարեցնել այն շրջաններին, վորտեղ յուրաքանչյուր կոլտնտեսականի տնտեսություն կարող և անձնական ոգտագործման համար ունենալ 2—3 կով կամ գոմեշ(քած) և բացի դրանից մատղաշներ, 2-ից մինչև 3 մայր խող իրենց ձագերով, 20—25 վոչխար ու այծ միասին, անսահմանափակ քանակությամբ թռչուն և մինչև 20 փեթակ։

գ). Արխազիայի այն գյուղերում, վորտեղ հողագործությունը փոքր նշանակություն ունի, իսկ անասնապահությունը վճռական դեր և խաղում տնտեսության մեջ, յուրաքանչյուր կոլտնտեսականի տնտեսություն կարող և անձնական ոգտագործման համար ունենալ 4-ից մինչև 5 կով կամ գոմեշ(քած) և բացի դրանից մատղաշներ, 30-ից մինչև 40 վոչխար ու այծ միասին, 2-3 մայր խող իրենց ձագերով, անսահմանափակ քանակությամբ թռչուն և մինչև 20 փեթակ։

Արխազիայի շրջանների գյուղերը, համաձայն վերոհիշյալ «ա» «բ» «գ» կետերի, վորոշում և Արխազիայի Հոդժովումատը։ Այստեղից յեկնելով յուրաքանչյուր կոլտնտեսականի տնտեսություն անձնական ոգտագործման համար կարող և ունենալ այսքան գլուխ անասուն.

կով _____

յեղջերավոր անասունի մատղաշներ _____

մայր խողեր իրենց ձագերով _____

վոչխար ու այծ _____

փեթակ _____

IV.

ԱՐՏԵԼԻ ՅԵՎ ՆՐԱ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒՅՈՒՆԸ

6. Արտելը պարտավորվում և իր կողմից տնտեսությունը վարել պլանով, ճշտիվ կատարելով բանվորագյուղացիական կառավարության որդանների սահմանած գյուղատնտեսական արտադրության պլանները և արտելի պարտավորությունները պետության հանդեպ։

Արտելն ընդունում և ճշտորեն կատարելու համար ցանքի, ցիլի, շարամեջ մշակման, բերքահավաքի, կալսելու և աշնանավարի պլանները, վորոնք կազմվում են կոլտնտեսությունների դրությունն ու առանձնահատկությունները հաշվի առնելով,—ինչպես և անասնապահության զարգացման պետական պլանը։

Արտելի վարչությունը և բոլոր անդամները պարտավորվում են.—

ա) բարձրացնել կոլտնտեսային դաշտերի բերքատուլությունը, մտցնելով և պահպանելով կանոնավոր ցանքաշրջանառություն, խորը հերկ, վոչնչացնելով մոլախոտերը, ընդարձակելով ու լավ մշակելով ցիլերն ու աշնանավարը, գտնելով դաշտը ծղոտից, մաքրելով դաշտերը

բ) յեգիստացորենի արմատավոր ցողուններից, թեյի պլանտացիաները, ցիտրուսավորների, մրգի ու խաղողի այգիները, դափնու, և ուրիշ բազմաբույս բույսերի տունկերը, ծխախոտը շաքարի ճակընդեղը, բամբակը, և այլ տեխնիկական կուլտուրաները, նմանապես և յեգիստացորենի, բախչաները, բանջարանոցները, կարտոֆիլի և այլ ցանքային կուլտուրաները իրա ժամանակին ու խնամքով շարքամեջ մշակելով։ Պարտադրանքներ հողը

թիւ տնտնտնադատական տպրանքային ֆերմաների և թիւ կոլտնտեսականի տնտեսութեան գոմարդրով, մտցնելով աղբը առաջին հերթին ցիտրուսավորների, պտղատու և խաղողի այգիներին, բանջարանոցների, բամբակի, ճակընդեղի և այլ տեխնիկական բույսերի տակ, նմանապէս հիմնելով և մտցնելով կոմպոստ թեյի, ցիտրուսների և մրգատու ծառերի տակ, մտցնելով հանքային պարարտանյութեր, պտղար մղելով գյուղատնտեսական ֆետատուների դեմ, ժամանակին բժշկելով թեյի, ցիտրուսների մրգատու և խաղողի այգիներին հիվանդութեանները, ժամանակին ու խնամքով հավաքելով բիրքն առանց կորստի, պահպանելով ու մաքրելով վոռոգիչ կառուցումները, պահպանելով տնտեսները, տնկելով դաշտերը պահպանող անտառաշերտեր, մաքրելով դաշտերը քարերից ու թիւերից, խտրելով պահպանելով տեղական հողային որդանների տպրանքային կանոնները.

բ) ցանքի համար ընտրել լավագոյն սերմեր, մաքրել դրանք ամեն տեսակի աղբից, պահպանել հափշտակումից ու փչացումից, պահել դրանք մաքուր ոգափոխվող շենքերում, ընդարձակել տեսակավոր սերմացվի սրանքերը, աճեցնել ու ջուկել տնկելու համար հողային որդանների կողմից վորոշված համապատասխան ստանդարտի բաղամայ կուլտուրաներ(ցիտրուսավոր, մերգատու և խաղողի կուլտուրաներ).

գ) ընդարձակել ցանքային ու արժեքավոր բաղամայ կուլտուրաներին հատկացրած տարածութեանը՝ ոգտագործելով արտելի տնորինութեան տակ զանված ամբողջ հողը, բարելավելով ու մշակելով բարձի թող արված հողերը, հերկելով խոպան հողերը, անցկացնելով չորացման և վոռոգման միջոցառումներ և կիրառելով ներկոտնտեսային հողաշինարարութեան.

դ) հանքային հիմունքներով լրիվ ոգտագործել արտելին պատկանող ամբողջ քաղող ուժը, ամբողջ ինվենտարը, գյուղատնտեսական գործիքները, սերմացան և արտագրութեան մյուս միջոցները, ինչպես և այն բոլոր արակտորները, շարժիչները, կախիչները, կոմբայները և մյուս մեքենաները, վոր բանվորագյուղացիական պետութեանը մեքենատրակտորային կայանների միջոցով վորպէս ոգնութեան տալիս և կոլտնտեսութեաններին, կազմակերպել հանքայնացված կենդանի ու մեռյալ ինվենտարի ճիշտ խնամքը, աշխատելով, վոր կողքելով տնտեսութեան մեջ անասուններն ու ինվենտարը լավ դրութեան մեջ լինեն:

յ) կազմակերպել անասնապահական ֆերմաներ, իսկ վորտեղ հնարավոր է՝ նաև ձիարուծական ֆերմաներ, ավելացնել անասունների թիվը ֆերմաներում, արտելային արտագրութեան մեջ աղնվորեն աշխատող անդամներին ոգնութեան ցույց տալ կով և մանր անասուն ձեռք բերելու գործում, ցեղական բարելավված արտագրվողներով սպասարկել վոշ միայն ֆերմաների անասուններին, այլև արտելի անդամների կողմից անձնապէս ոգտագործվող անասուններին, պահպանել սահմանված գոտեխնիկական և անասնարուծական կանոնները.

զ) ընդարձակել կերարուսիւր արտագրութեանը, բարելավել մարգագետիններն ու արոտավայրերը, ոգնութեան ցույց տալ հանքային արտագրութեան մեջ բարելոգորեն աշխատող արտելի անդամներին, ապահովելով նրանց համար, վորտեղ այդ հնարավոր է՝ կոլտնտեսային արոտավայրերից ոգափելը, ինչպես և ըստ հնարավորութեան կեր տալով՝ նրանց անձնական ոգտագործման անասունների համար ի հաշիվ աշխուրի.

է) զարգացնել գյուղատնտեսական արտագրութեան մյուս բոլոր ճյուղերը. ինչպես, որինակ՝ պահպանել ու

մաքրել գոյություն ունեցող ընկերները, կառուցել նորերը և զարգացնել նրանց մեջ ձկնատնտեսություն, զարգացնել տնայնագործական հետեյալ զբաղմունքները՝

ը) կազմակերպել տնտեսական ու հանրային շենքերի շինարարությունը հանրային հիմունքներով:

թ) բարձրացնել արտելի անդամների աշխատանքային փորակավորումը, ոժանդակել կոլտնտեսականներին՝ նըրանցից բրիգադիրներ, տրակտորավարներ, կոմբայնավարներ, շոֆերներ, անասնաբուժականներ ու սանիտարներ, ձիապաններ, խոզապաններ, անասնապահներ, հովիվներ, նախարապաններ, հողալավացնողներ (мелиораторы) պատվաստողներ, ջրողներ, խրճիթ — լարողորատորիաների աշխատողներ պատրաստելու գործում:

ժ) բարձրացնել արտելի անդամների կուլտուրական մակարդակը, արմատացնել թերթը, գիրքը, ռադիոն, էինոն, ստեղծել ակումբներ, գրադարաններ ու ընթերցարաններ, ունենալ բաղնիքներ, վարսավերանոցներ, սարքավորել մաքուր ու լուսավոր կայաններ զաշտում, կարգի բերել գյուղի փողոցները, փողոցներում տնկել, զանազան, առանձնապես պուղատու ծառերի, թուփի եվկալիպտի, տունգի, դափնու, ընկուզենու և այլք:

աջակցել կոլտնտեսականներին՝ բարելավելու և զարգացնելու իրենց բնակարանները:

ժա) աջակցել արտելի անդամներին, նրանց անձնական ոգտագործման հատկացրած տնամիքձ հողերի վրա բազմացնելու արժեքավոր, բազմամյա բայետրոբ, ցիտրուսներ, տունգ, եվկալիպտ, պուղատու, թուփի, ընկուզենի և զանազան զեկորատիվ բույսեր:

ժբ) ներգրավել կանանց կոլտնտեսային աբտադրության և արտելի հասարակական կյանքի մեջ, ընդու-

նակ և փորձված կոլտնտեսուհիներին առաջ քաշելով ղեկավար աշխատանքի, ըստ հնարավորության թեթևացնելով նրանց տնային աշխատանքը՝ մատրներ, մանկական հրապարակներ և այլն ստեղծելու միջոցով:

V.

ԱՆԴԱՄՈՒՅՅԱՆ ՄԱՍԻՆ

7. Արտելի անդամի ընդունելությունը կատարում և ընդհանուր ժողովը, վորը հաստատում և վարչության կողմից մացված նոր անդամների ցուցակները:

Արտելի անդամ կարող են դառնալ բոլոր աշխատավորները՝ 16 տարեկանից սկսած, ինչպես կանայք, այնպես էլ տղամարդիկ:

Արտելի մեջ չեն ընդունվում կուլակները և ընտրական իրավունքներից զրկված բոլոր անձինք:

Ծանոթություն.— Այս կանոնից թույլատրվում և բացառություն անել՝

ա) ձայնագրողների այն զավակների վերաբերմամբ, վորոնք մի շարք տարիների ընթացքում զբաղված են հանրոգուտ աշխատանքով և աշխատում են բարեխղճորեն:

բ) նախկին այն կուլակների և նրանց ընտանիքի անդամների վերաբերմամբ, վորոնք արտաքսված լինելով հակախորհրդային և հակակոլտնտեսային յեկույթների համար, իրենց նոր բնակավայրերում յերեք տարվո ընթացքում իրենց ազնիվ աշխատանքով և խորհրդային իշխանության ձեռնարկումներին ոժանդակելով ցույց են տվել, վոր իրենք ուղղվել են:

Այն մենատնտես գյուղացիները, վորոնք արտել մտնելուց առաջ յերկու տարվա ընթացքում վաճառել են իրենց ձիերն ու բանվոր անասունը և սերմացու չունեն, արտել են ընդունվում այն պայմանով, վոր պարտավորվեն իրենց յեկամուտներից մինչև վից տարի ժամանակամիջոցում մաս—մաս մուծել

բանվոր անասունի արժեքը և սերմացուն՝ բնա-
մթերքով:

8. Անդամների վտարումը արտելից կարող են կա-
տարվել միմիայն արտելի անդամների ընդհանուր ժո-
ղովի վորջամար, վորին ներկա յե արտելի անդամնե-
րին ընդհանուր թիվի առնվազն $\frac{2}{3}$ մասը: Արտելի ան-
դամների ընդհանուր ժողովի արձանագրության մեջ ան
պայման մատնանշվում են ժողովին ներկա գտնվող
կոտնտեսավանների թիվը և վտարելու համար քվե
սովորների թիվը:

Այն դեպքում, յերբ արտելի անդամը խորհուրդների
շրջանային գործադիր կոմիտեյին բողոքում են իր վը-
տարման դեմ, հարցը վերջնականապես լուծում են խոր-
հուրդների շրջանային գործադիր կոմիտեյի նախագա-
հությունը՝ արտելի վարչության նախագահի և բողո-
քատվի ներկայությամբ:

VI.

ԱՐՏԵԼԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

9. Արտել մտնողները պետք և մուծեն մուտքի վճար
դրամով 20—40 ռուբլի յուրաքանչյուր անտեսության
համար, նայած նրանց անտեսության կարողության:
Մուտքի վճարներ մտցվում են արտելի անբաժանելի
ֆոնդի մեջ:

10. Արտելի անդամների հանրայնացված գույքի
արժեքի (բանող անասուններ, ինվենտար, անտեսա-
կան շենքի և այլն) մի քառորդից մինչև կեսը հառ-
կացվում են արտելի անբաժանելի ֆոնդին, ըստ
վորում անբաժանելի կապիտալին արվող հառ-
կացման ավելի բարձր տոկոս և կիրառվում ավելի ուժեղ
անտեսությունների նկատմամբ: Գույքի մնացած մասը
մտցվում են արտելի անդամի վաճառվածարի մեջ:

Վարչությունը արտելի կազմից դուրս յեկող ան-
դամների հաշիվները մաքրում և նրանց վաճառվածարը
վերագարձնում և դրամով, ընդվորում արտելից դուրս
յեկողին կարող և հողաբաժին տրվել միմիայն արտելի
հողային տարածության սահմաններից դուրս: Հաշվե-
տեսը, վորպես կանոն կատարվում են անտեսական տա-
րին վերջանալուց հետո:

11. Արտելն իր ստացած բերքից և անասնապահու-
թյան մթերքներից՝

ա) կատարում են պետության հանդեպ մթերք հան-
ձնելու և սերմվարկերը վերագարձնելու իր ունեցած
պարտավորությունները, մեքենատրակտորային կապ-
նին բնամթերքով վճարում են մեքենատրակտորային
կաշանի կատարված աշխատանքի համար սրենքի ուժ
ունեցող կնքված պայմանագրի համաձայն, կատար-
ում են կոնտրակտացիայի պայմանագրերը՝

բ) սերմացու յե առանձնացնում ցանքի համար և
կեր՝ անասուններին կերակրելու համար ամբողջ տարվա
պահանջի չափով յինչպես և անբերությունից ու կերի
պակասությունից ապահովելու համար ստեղծում են ան-
ձեռնմխելի, տարեցտարի վերականգնվող սերմի ու կե-
րի ֆոնդ՝ տարեկան պահանջի 10—15 $\frac{0}{100}$ — ի չափով:

գ) ընդհանուր ժողովի վորջամար հատուկ ֆոնդ և
ստեղծում հաշմանդամներին, ծերերին, ժամանակավո-
րապես իրենց աշխատունակությունը կորցրա ծներին,
կարմիր բանակայինների կարիքավոր բնտանիքներին,
մանկամուրներին ոգնելու և վորերի պահպանման
համար — այս բոլորը պիտի կազմի ընդհանուր
արտադրանքի յերկու տոկոսից վոչ ավելին:

դ) արտելի անդամների ընդհանուր ժողովի վորջամ
չափով հատկացնում և մթերքների մի մասը՝ պետու-
թյանը կամ շուկայում վաճառելու համար:



և) արտելի բերքի և նրա անասնապահութեան միջոցներով մնացած ամբողջ մասսան արտելը բաշխում և իր անդամների մեջ՝ ըստ աշխտերի:

12. Արտելն իր ստացած դրամական յեկամուտներից՝

ա) պետութեանը տալիս և որինքով սահմանված հարկերը և ապահովագրական վճարումներ և կատարում:

բ) անհրաժեշտ ծախսեր և անում արդարական ընթացիկ կարիքների համար, այն է՝ գյուղատնտեսական գործիքների ընթացիկ նորոգումը, անասունների բուժումը, պայքար վնասատուների դեմ և այլն:

գ) հողում և արտելի վարչատնտեսական ծախսերը, այդ նպատակով հատկացնելով փողային յեկամուտների յերկու տոկոսից վոչ ավելին:

դ) միջոցներ և հատկացնում կուլտուրական կարիքներին, այն է՝ բրնձադիրներ և այլ կադրեր պատրաստելու, մաուրներ կազմակերպելու, ռադիո գնելու և այլն:

յե) լրացնում և արտելի անրաժանելի ֆոնդը՝ գյուղատնտեսական գործիքներ և անասուններ գնելու, շինանյութերի արժեքը վճարելու և դրանց շինարարութեանը ներգրավվող բանվորների հետ հաշիվ տեսնելու համար, գյուղատնտեսական բանկի յերկարատե վարկերի հերթական վճարները մուծելու համար, ընդ վորում հողուտ անրաժանելի ֆոնդի հատկացումներ ու լրացումներ ենկատարվում արտելի դրամական յեկամուտների 10 տոկոսից մինչև վոչ ավելի քան 20 տոկոսի չափով:

զ) արտելի դրամական յեկամուտների մնացած ամբողջ գումարն արտելը բաշխում և իր անդամների միջև, ըստ աշխտերի:

Ստացված բոլոր մուտքերն անպայման գրանցվում են արտելի մուտքի մատյաններում (հենց ստացվելու որը):

Արտելի վարչութեանը կազմում և թե՛ յեկամուտների մուտքի և թե՛ ծախսի միջոցների տարեկան նախահաշիվ, վորն ուժի մեջ և մտնում արտելի անդամների ընդհանուր ժողովի կողմից հաստատվելուց հետո:

Վարչութեանը միջոցներ կարող և ծախսել միմիայն այն հողվածների համաձայն, վորոնք նախատեսված են նախահաշիվով: Վարչութեանը չի թույլատրվում միջոցներն ինքնուկամ կերպով փոխադրել ծախսի նախահաշիվի մի հողվածից մյուսը և միջոցները մի հողվածից մյուսը փոխադրելու համար վարչութեանը պարտավոր և ստանալ ընդհանուր ժողովի թույլատվութեանը:

Արտելն իր ազատ միջոցները պահում և բանկում իր ընթացիկ հաշիվում կամ խնայողական դրամարկղում: Միջոցներն ընթացիկ հաշիվից դուրս են գրվում միմիայն արտելի վարչութեան հրամանով, վորը վավերական և արտելի նախագահի ու հաշվապահի ստորագրութեամբ:

VII.

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ,

ՎԱՐՁԱՏՐՈՒՄՆ ՈՒ ԿԱՐԳԱՊԱՀՈՒՅՑՈՒՆԸ

13. Արտելի տնտեսութեան բոլոր աշխատանքները կատարվում են նրա անդամների անձնական աշխատանքով համաձայն ընդհանուր ժողովի ընդունած ներքին կարգի կանոնների: Գյուղատնտեսական աշխատանքների համար վարձով թույլատրվում և ողտագործել միմիայն այն անձանց, վորոնք ունեն մասնագիտական գիտելիքներ և պատրաստութեան (ագրոնոմներ, ինժինեռներ, տեխնիկներ և այլն):

Թույլատրվում և ժամանակավոր բանվորներ վարձել միմիայն բացառիկ դեպքերում, յերբ շտապ աշ-

խոտանքները հնարավոր չե կատարել պահանջված ժամկետին արտելի անդամների առկա ուժերով նրանց լիակատար ծանրաբեռնութեան դեպքում, ինչպես և շինարարական աշխատանքների համար:

14 Վարչութիւնն արտելի անդամներից ստեղծում և արտադրական բրիգադներ:

Դաշտավարական բրիգադները կազմակերպւում են առնվազն լիակատար ցանքաշրջանառութեան ժամանակի համար:

Դաշտավարական բրիգադին հոդամուտը են հատկացւում ցանքաշրջանառութեան դաշտերում ցանքաշրջանառութեան ժամանակաշրջանի համար:

Դաշտավարական յուրաքանչյուր բրիգադին կուտնտեսութեան վարչութիւնը հատուկ արձանագրութեամբ ամրացնում և նրան անհրաժեշտ ամբողջ ինվենտարը, բանող անասունները և տնտեսական շենքերը:

Անասնապահական բրիգադները կազմւում են առնվազն յերեք տարի ժամանակով:

Արտելի վարչութիւնը անասնապահական բրիգադին ամրացնում և մթերատու անասունները, սպասար կման համար անհրաժեշտ ինվենտարը, քաշող ուժը և անասնապահական շենքերը:

Արտելի անդամների մեջ աշխատանքը բաշխում և անմիջականորեն բրիգադիքը, փորը պարտավոր և լաւ վագոյն ձեռով ոգտագործել իր բրիգադի յուրաքանչյուր կուտնտեսականի, թմբլ չտալով վոչ մի խնամիութեան և ընտանեկանութեան՝ աշխատանքը բաշխելիս և խտրիվ հաշվի առնելով սովորական մեկի աշխատանքային վորակավորումը, փորձն ու ֆիզիկական ուժը, իսկ հղի կանանց և ծծմալների նկատմամբ նրանց աշխատանքը թեթեւացնելու անհրաժեշտութեանը, ազատելով նրանց աշխատանքից ծննդաբերութեանից մի ամիս առաջ և ծննդաբերութեանից մի ամիս հետո, պահ-

պանելով այդ յերկու ամսվա համար նրանց հասանելիքը, նրանց աշխոբերի միջին վաստակի կեսի չափով:

15. Գյուղատնտեսական աշխատանքները կատարւում են գործավարձի հիման վրա:

Արտելի վարչութիւնը մշակում և և կուտնտեսականների ընդհանուր ժողովը հաստատում բոլոր գյուղատնտեսական աշխատանքների պլանը, արտադրանքի նորմաները և յուրաքանչյուր աշխատանքի գնահատումներն աշխոբերով:

Յուրաքանչյուր աշխատանքի համար սահմանվում են բարեխղճորեն աշխատող կուտնտեսականին մատչելի արտադրանքի նորմաներ, հաշվի առնելով բանող անասունների, մեքենաների ու հողի զրութեանը: Յուրաքանչյուր աշխատանք, որինակ՝ մի հեկտարի վարը, մի հեկտարի ցանքը, մի հեկտար բամբակի բուկ տալը, մի տոնն հացահատիկի կալումը, մի ցենտներ ձակնդեղի հանումը, մի հեկտար վուշի գղելը, մի հեկտար վուշի թրջոցը, մի լիտր կաթ կթելը և այլն, գնահատվում և աշխոբերով՝ նայած աշխատողից պահանջված վորակավորմանը, աշխատանքի բարդութեանը, դժվարութեանը և արտելի համար ունեցած կարեւորութեանը: Բրիգադիին առնվազն շաբաթը մեկ անգամ հաշվում և արտելի յուրաքանչյուր անգամի կատարած ամբողջ աշխատանքը և սահմանված գնահատումների համաձայն կուտնտեսականի աշխատանքային գրքույկում գրանցում և նրա վաստակած աշխոբերի քանակը:

Արտելի վարչութիւնն ամիսը մեկ անգամ կախում և արտելի անդամների ցուցակը, մասնանշելով նախորդ ամսում նրանց վաստակած աշխոբերի քանակը:

Յուրաքանչյուր կուտնտեսականի աշխատանքի տուրքեկան արդյունքը և յեկամուտը, բացի հաշվապահից, անպայման հաստատվում և բրիգադիի և արտելի նախագահի կողմից: Արտելի յուրաքանչյուր անգամի վաս-

տակած աշխուրհերի ցուցակը կախվում է ի գիտութիւն բոլորի՝ արտելի յեկամութեան լաշխումը հաստատող ընդհանուր ժողովից ամենաուշը յերկու շաբաթ առաջ:

Յեթն գաշտավարական բրիգադը, լավ աշխատանքի շնորհիվ իրեն ամրացված հողամասից ստանում է միջին կոլտնտեսայինից բարձր բերք, կամ անասնապահական բրիգադը լավ աշխատանքի շնորհիվ ապահովում է կովերի ավելի բարձր կաթնատուութիւնը, անասունների ավելի գերութիւնը և մատղաշների լիակատար պահպանումը, ապա արտելի վարչութիւնն աշխատակից բրիգադի բոլոր անդամների յեկամուտի վրա հասնումներ է անում նրանց վաստակած աշխուրհերի ամբողջ թվի մինչև 10 տոկոսի չափով, բրիգադի աշխուրհին ող հարվածայիններին՝ մինչև 15 տոկոսի չափով, իսկ բրիգադի իրեն և ֆերմայի վարչիին 20 տոկոսի չափով:

Յեթն գաշտավարական բրիգադը վատ աշխատանքի պատճառով իրեն ամրացված հողամասերից հավաքում է միջին կոլտնտեսայինից ցածր բերք կամ անասնապահական բրիգադին իր վատ աշխատանքի պատճառով տալիս է միջակից ցածր կաթնատուութիւն, անասունների գերութիւնը և մատղաշի պահպանում, ապա արտելի վարչութիւնն աշխատակից բրիգադի բոլոր անդամների յեկամուտներից պահումներ է կատարում նրանց վատակած աշխուրհերի ամբողջ թվի մինչև 10 տոկոսի չափով:

Արտելի յեկամութեան բաշխումը անդամների միջև է առարկում է բացառապէս արտելի յուրաքանչյուր անդամի վաստակած աշխուրհի քանակի համաձայն:

16. Տարվա ընթացքում արտելի անդամին կարելի է գրամական ավանս տալ միջ ավելի, քան աշխատանքի համար նրան հասնող գումարի 50 տոկոսի չափով:

Վարչութիւնն արտելի անդամներին բնավճարով ա-

վանս է տալիս հացահատիկը կախելու սկզբից կոլտնտեսութեան ներքին կարիքներին հատկացված 10—15 տոկոս կախված հացահատիկից:

Տեխնիկական մշակութիւնների ցանքով զբաղվող արտելում արտելի անդամին դրամական յեկամութեւն վճարվում է առանց սպասելու, վոր վերջնա բամբակի, վուշի, կանեփի, ճակնդեղի, թեյի ծխախոտի հանձնումը պետութեանը, այլ հանձնելուն զուգընթաց, առնվազն չաբաթը մեկ անգամ՝ հանձնված արտադրանքի համար արտելի ստացած դրամի 60 տոկոսի չափով:

17 Արտելի բոլոր անդամները պարտավորվում են խստիվ պահպանել իրենց կոլտնտեսային սեփականութիւնը և կոլտնտեսային գաշտերում աշխատող պետական մեքենաները, աշխատել ազնվորեն, յենթարկվել կանոնադրութեան պահանջներին և ընդհանուր ժողովի ու վարչութեան վորոշումներին, պահպանել ներքին կարգի կանոնները, ճշտիվ կատարել վարչութեան և բրիգադի բոլոր կողմից նրանց հանձնարարված, աշխատանքը և հասարակական պարտականութիւնները խստիվ պահպանել աշխատանքի կարգապահութիւնը:

Հանրային գույքին անտնտեսներն ու անսրտացավ վերաբերվելու համար, առանց հարգելի պատճառների աշխատանքի զուրս չգալու, վատորակ աշխատանքի և աշխատանքային կարգապահութեան ու կանոնադրութեան այլ խախտումներ կատարելու համար, վարչութիւնը մեղավորներին տույժի յե յենթարկում ներքին կարգի կանոնների համաձայն որինակ՝ կրկին կատարել տալ վատորակ կատարված աշխատանքն առանց աշխուրհի հաշիւի, նախազգուշացում, հանդիմանութիւն անել, պարտավանքի յենթարկել ընդհանուր ժողովում, բարձրացնել սե տախտակի, տուգանել մինչև հինգ աշխուրհ չափով, փոխադրել ցածր աշխատանքի, ժամանակավորապէս հեռացնել աշխատանքից:

Այն դեպքերում, յերբ դատարարակելու և պատժելու համար արտելի ձեռք առած բոլոր միջոցները չեն ներգործում, վարչութիւնն ընդհանուր ժողովում դնում և արտելի անուղղելի անդամներին արտելից վտարելու հարցը:

Վտարումը կատարվում է գյուղատնտեսական արտելի կանոնադրութիւն 8 -- րդ կետում սահմանված կարգով:

18. Հանրային կոլտնտեսային և պետական սեփականութեան ամեն մի հափշտակում, դեպի արտելի գույքն ու անասունները և մեքենատրակտորային կայանները մեքենաները ցույց տրվող ամեն մի վնասարարական վերաբերմունք արտելը դիտում է վորպես դավաճանութիւն՝ կոլտնտեսութեան ընդհանուր գործին և ոգնութիւն՝ ժողովրդի թշնամիներին:

Կոլտնտեսային կարգերի հիմունքներն այդպես հանցաւոր կերպով խախտելու համար մեղավոր անձինք, արտելի կողմից դատի յեն տրվում՝ բանվորադուղացիական պետութեան որենքների ամբողջ խստութեամբ նրանց պատժելու համար:

VIII

ԱՐՏԵԼԻ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

19 Արտելի գործերը կառավարում է արտելի անդամների ընդհանուր ժողովը, իսկ ժողովների միջև ընկած ժամանակամիջոցում՝ ընդհանուր ժողովի ընտրած վարչութիւնը:

20. Ընդհանուր ժողովն արտելի կառավարման բարձրագույն որդանն է:

Ընդհանուր ժողովը՝

ա) ընտրում է արտելի նախագահ և արտելի վարչութիւն, ինչպես և արտելի վերստուգիչ հանձնաժողով, ընդ վորում վերստուգիչ հանձնաժողովը հաստատվում է խորհուրդների շրջանային գործադիր կոմիտեյի կողմից:

բ) կատարում է նոր անդամների ընդունելութիւնը և անդամների վտարումն արտելի կազմից:

գ) հաստատում է տարեկան արտադրական պլանը, մուտքի ու յեւքի նախահաշիվը, շինարարութեան պլանը, արտադրանքի նորմաները և աշխատանքի գնահատումն աշխորերով:

դ) հաստատում է մեքենատրակտորային կայանի հետ կնքվող պայմանագիրը:

յե) հաստատում է վարչութեան՝ տարեկան հաշիւտ-վութիւնը վերստուգիչ հանձնաժողովի պարտադիր յեզրակացութեան հետ միասին, ինչպես և վարչութեան հաշիւտվութիւնները գյուղատնտեսական կարևորագույն կամպանիաների վերաբերմամբ:

զ) հաստատում է զանազան ֆոնդերի չափը և աշխորի համար տրվելիք միջոցի ու դրամի քանակը:

ե) հաստատում է արտելի ներքին կարգի կանոնները: Կանոնադրութեան այս կետում թվարկված բոլոր հարցերի վերաբերմամբ արտելի վարչութեան ընդունած վորոշումներն անվաւեր են առանց ընդհանուր ժողովի հաստատման:

Ընդհանուր ժողովն արտելի անդամների ընդհանուր թվի առնվազն կեսը ներկա լինելու դեպքում որինական է՝ բոլոր հարցերը լուծելու համար, բաց արտելի վարչութեանու նախագահի ընտրութեան հարցից, արտելի կազմից վտարելու հարցից և զանազան ֆոնդերի չափին վերաբերող հարցից, վորոնք վորոշելու համար անհրաժեշտ, վոր ընդհանուր ժողովում ներկա լինեն անդամների ընդհանուր թվի առնվազն յերկու յերրորդ մասը:

Ընդհանուր ժողովը վորոշումներ է ընդունում ձայնների մեծամասնութեամբ՝ բաց քվեարկութեամբ:

21. Արտելի գործերը վարելու համար արտելի անդամների ընդհանուր ժողովը յերկու տարի ժամանակով ընտրում է վարչութիւն 5—9 հոգի կազմով, նայած արտելի մեծութեանը:

Արտեւի վարչութիւնն արտեւի գործադիր որդանն է և արտեւի անդամները ընդհանուր ժողովի առաջ պատասխանատու յե արտեւի աշխատանքի համար և պետութեան հանդեպ արտեւի պարտավորութիւնները կատարման համար:

22. Արտեւի և նրա բրիգադների աշխատանքի ամենորոյա դեկլարութեան, ինչպես և վարչութեան վորտումների կատարման ամենորոյա ստուգման համար արտեւի ընդհանուր ժողովն ընտրում է արտեւի նախագահ, վարը միեւնոյն ժամանակ հանդիսանում և վարչութեան նախագահը:

Նախագահը պարտավոր է վարչութեան նիստ գումարել ամսական առնվազն յերկու անգամ՝ ընթացիկ գործերը քննարկելու և համապատասխան վորտումներ ընդունելու համար:

Վարչութեանը նախագահին ոգնելու համար վարչութեան անդամներից ընտրում է նախագահի տեղակալ, նախագահի տուջադրութեամբ:

Նախագահի տեղակալն իր ամբողջ աշխատանքի մեջ յենթարկվում է նախագահի ցուցումներին:

23. Անասնապահական ֆերմաների բրիգադիրներին ու վարիչներին նշանակում է արտեւի վարչութեանը, առնվազն յերկու տարի ժամանակով:

24. Հաշվապահութեանը վարելու և գույքի հաշվառումը կատարելու համար, վարչութեանն արտեւի անձամբներից ընտրում կամ վարձով հրավիրում է հաշվապահ: Հաշվապահը վարում է հաշվապահութեանը և ամբողջովին յենթարկվում է արտեւի վարչութեանն ու նրա նախագահին:

Հաշվապահին վոյ մի իրավունք չի տրվում ինքնակամ տնորինել արտեւի միջոցները, ավանաներ տալ ևծախսել ընամթերքի ֆոնդերը: Այդ իրավունքները վերապահվում են միմիայն արտեւի վարչութեանը

և նախագահին: Արտեւի ծախսի դրամական փաստաթղթերը ստորագրում են, բացի հաշվապահից, նաև արտեւի նախագահը կամ նրա տեղակալը:

25. Վերստուգիչ հանձնաժողովն ստուգում է վարչութեան տնտեսական — ֆինանսական ամբողջ գործունեւութեանը, ստուգում է՝ թե զրամի ու ընամթերքի մուտքերն արդյոք սահմանված կարգով մուտք արված են արտելում, արդյոք պահպանվել է միջոցները ծախսելու կանոնադրութեամբ չարգը, չկան արդյոք արտեւի գույքի և դրամական միջոցների հաշտակումներ ու վատնումներ, ինչպես և կատարում արդյոք արտեւն իր պարտավորութիւնները պետութեան հանդեպ, ինչպես և վճարում իր պարտքերը և ինչպես և գանձում իր ստանալիքներն արտեւի պարտապաններից:

Դրա հետ միասին վերստուգիչ հանձնաժողովը մանրագնին ստուգում է արտեւի բոլոր հաշիւներն իր անդամների հետ, յերեան է բերում թերահաշիւի, աշխորերի վոյ ճիշտ գրանցման, աշխորերի հաշիւները ժամանակին չտեսնելու ամեն մի դեպք և արտեւի ու նրա անդամների շահերի խախտման այլ դեպքերը:

Վերստուգիչ հանձնաժողովը վերստուգում է կատարում տարեկան 4 անգամ: Վերստուգիչ հանձնաժողովը վարչութեան կողմից ընդհանուր ժողովին ներկայացվող տարեկան հաշիւութեան առթիւ տալիս է իր յեղրակացութեանը, վորն ընդհանուր ժողովը լսում է վարչութեան հաշիւութեանից անմիջապես հետո: Վերստուգման արձանագրութեանը հաստատվում է ընդհանուր ժողովի կողմից:

Վերստուգիչ հանձնաժողովն իր գործունեւութեան համար հաշիւտու յե արտեւի անդամների ընդհանուր ժողովի առաջ:

ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

3499



ՀՀ Ազգային գրադարան



NL0205377

2016

5

312